ՍԴ3/0138/01/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24 դեկտեմբերի 2024 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՍԴ3/0138/01/21 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 16-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2021 թվականի դեկտեմբերի 6-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում ստացվել է թիվ 90963318 (ՍԴ3/0138/01/21) քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Մկրտիչ Երեմի Չախախլյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 358.1-րդ հոդվածի 1-ին մասով, 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով, Լուկաշ Սամվելի

Պետրոսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով, 360-րդ հոդվածի 2-րդ մասով, 375-րդ հոդվածի 2-րդ մասով, Դավիթ Մնացականի Կարապետյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով և Դավիթ Աշոտի Սարգսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով:

2021 թվականի դեկտեմբերի 14-ին թիվ ՍԴ3/0138/01/21 քրեական գործն ընդունվել է դատավոր Բ.Բախշիյանի վարույթ և 2021 թվականի դեկտեմբերի 24-ին որոշում է կայացվել դատական քննություն նշանակելու մասին:

1.1. Դատավոր Բ.Բախշիյանի լիազորությունները կասեցված լինելու հիմքով թիվ ՍԴ3/0138/01/21 քրեական գործը վերաբաշխվել է դատավոր Վ.Ջիվանյանին և 2022 թվականի մարտի 10-ին ընդունվել է վարույթ:

1.2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ թիվ ՍԴ3/0138/01/21 քրեական գործն ըստ առարկայական ընդդատության ուղարկվել է Հակակոռուպցիոն դատարան:

2. Հակակոռուպցիոն դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 22-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0114/01/22 (ՍԴ3/0138/01/21) քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

Հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 24-ի որոշմամբ Դավիթ Աշոտի Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ Դավիթ Մնացականի Կարապետյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

2.1. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի մարտի 11-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0114/01/22 քրեական գործն ըստ առարկայական ընդդատության Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

3. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի մարտի 29-ին որոշում է կայացրել քրեական գործի վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

3.1. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի օգոստոսի 9-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0138/01/21 (ՀԿԴ/0114/01/22) քրեական գործով ընդդատության մասին վեճը լուծելու համար վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին:

Վճռաբեկ դատարանի նախագահի, քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահների՝ 2024 թվականի սեպտեմբերի 2-ի որոշմամբ քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության ուղարկվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

4. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 12-ին որոշում է կայացրել քրեական գործի վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 4-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0138/01/21 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 16-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0138/01/21 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

5. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի դեկտեմբերի 19-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Լուկաշ Սամվելի Պետրոսյանը ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով, 360-րդ հոդվածի 2-րդ մասով և 375-րդ հոդվածի 2-րդ մասով

ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«նա զբաղեցնելով ՊԲ 36534 զորամասի 5-րդ հրաձգային գումարտակի 13-րդ հրաձգային վաշտի հրամանատարի պաշտոնը, կոչումով կապիտան, 08.09.2018թ. զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ ծեծի է ենթարկել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող, իր անմիջական ղեկավարության ներքո գտնվող վաշտի ժամկետային պարտադիր զինծառայող, շարքային Գևորգ Սուրենի Հարությանին, մասնավորապես, 08.09.2018թ.՝ երեկոյան, տեղեկանալով, որ Գ.Հարությանն ընդգրկված լինելով ճաշարանի վերակարգում, ճաշարանի հերթապահ, նույն վաշտի 2-րդ դասակի հրամանատար, կապիտան Դավիթ Կարապետյանի կողմից ազատվել է վերակարգից, սակայն տևական ժամանակ գումարտակի մասնաշենք չի ներկայացել, նրան հայտնաբերելու և այդ կապակցությամբ պարզաբանումներ կատարելու նպատակով, ինչպես նաև ենթադրելով, որ նույն օրը՝ երեկոյան, սպայական շենքերի մոտ իր հետ վիճաբանության մեջ մտած քաղաքացիական անձինք հնարավոր է կապ ունենան Գ.Հարությանի հետ և նրա կողմից հրավիրված լինեն, ցանկանալով նշված հարցի շուրջ անձամբ զրուցել Գ.Հարությանի հետ, սպայական բնակարանից ժամը 22:00-ի սահմաններում մեկնել է զորամասի մշտական տեղակայման վայր, Դ.Կարապետյանի հետ միասին ճաշարանից գնացել է 5-րդ գումարտակի մասնաշենք, ապա միայնակ մտել է իր աշխատասենյակ, իսկ Դ.Կարապետյանը շարունակել է որոնել Գ.Հարությանին, որից կարճ ժամանակ անց՝ ժամը 22:30-ի սահմաններում, վիճաբանության ձայներ լսելով դուրս է եկել աշխատասենյակից և զորանոցի ննջարանների մոտ ականատես է եղել Դ.Կարապետյանի և Գ.Հարությանի միջև առաջացած ծեծկռտուքին, միջամտել և դադարեցրել է վիճաբանությունը, որից հետո փորձել է կարգի հրավիրել Գ.Հարությանին և նույն վայրում ծեծի է ենթարկել նրան՝ երեքից չորս անգամ աջ և ձախ ձեռքերով ապտակներ է հասցրել վերջինիս դեմքին, ապա Գ.Հարությանին հրավիրել է աշխատասենյակ և զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ սպային՝ Դ.Կարապետյանին հակաճառելու և նրան հարվածելու, ինչպես նաև վերակարգից ազատվելուց հետո տևական ժամանակ գումարտակի մասնաշենք չներկայանալու պատճառով մեկ անգամ ապտակել է Գ.Հարությանի դեմքին, ապա այլ բռնություն է*

գործադրել նրա նկատմամբ՝ համազգեստից բռնելով քաշել և գցել է աշխատասենյակում առկա բազմոցին, ապա նույն պատճառով կրկին ծեծի է ենթարկել նրան՝ երեքից չորս անգամ ապտակներ է հասցրել Գ.Հարությանի դեմքին:

(…)

Բացի այդ, Լուկաշ Պետրոսյանը, զբաղեցնելով 13-րդ հրաձգային վաշտի հրամանատարի պաշտոնը, կոչումով կապիտան, 08.09.2018թ.՝ ժամը 22:30-ի սահմաններում, իր աշխատասենյակում, ծառայողական պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ սպային՝ Դ.Կարապետյանին նույն օրը հակաճառելու և նրան հարվածելու պատճառով, ծնողին ուղղված սեռական բնույթի հայհոյանք է հնչեցրել Գ.Հարությանի հասցեին՝ անպարկեշտ ձևով ստորացնելով իր նկատմամբ ստորադաս հանդիսացող Գևորգ Հարությանի պատիվն ու արժանապատվությունը:

(…)

Բացի այդ, Լուկաշ Պետրոսյանը, զբաղեցնելով 13-րդ հրաձգային վաշտի հրամանատարի պաշտոնը, կոչումով կապիտան, հանդիսանալով պաշտոնատար անձ, զինվորական կանոնադրությունների համաձայն օժտված լինելով վերահսկիչ ու կարգադրիչ լիազորություններով, 30.09.2018թ.՝ ժամը 21:00-ի սահմաններում, նույն վաշտի 3-րդ դասակի 2-րդ ջոկի հրամանատար, պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Մկրտիչ Երեմի Զախախլյանից տեղեկանալով 29.09.2018թ.՝ ժամը 12:30-ի սահմաններում, վաշտի ննջասենյակում վերջինիս ու նույն դասակի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Գևորգ Սուրենի Հարությանի միջև տեղի ունեցած վիճաբանության ընթացքում Մ.Զախախլյանի կողմից Գ.Հարությանի ծնողի հասցեին հայհոյանք հնչեցնելու, միմյանց քաշքշելու և փոխադարձ հարվածներ հասցնելու դեպքի մասին՝ այդպիսով անձամբ տեղեկություններ ստանալով իրեն ենթակա անձնակազմի կողմից ենթադրյալ հանցագործություններ կատարելու դեպքի մասին, ՀՀ ՔՕՒ կարգապահական կանոնագրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի և ՀՀ ՊՆ 25.12.2015թ. թիվ 1525 հրամանի համաձայն պարտավոր լինելով կատարված դեպքի մասին անհապաղ զեկուցել վերադաս հրամանատարությանը, ինչպես նաև հայտնել իրավապահ մարմիններին, հակառակ ծառայության շահերի, ենթակա զինծառայողների մոտ իր «հեղինակությունը» բարձրացնելու, դեպքը վերադաս հրամանատարությունից

կոծկելու և այդ կերպ Մ.Զախախյանին «հովանավորելու» անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, խախտելով ՀՀ ՔՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 141-րդ հոդվածների պահանջները, դրսևորել է իշխանության անգործություն՝ չի կատարել օրենքով և զինվորական կանոնադրություններով իր վրա դրված պարտականությունները, իրավախախտման դեպքի մասին չի զեկուցել վերադաս հրամանատարությանը, ինչի արդյունքում չի կատարվել ՀՀ ՊՆ 1525 հրամանի պահանջները՝ դեպքի մասին իրավապահ մարմիններին հաղորդում չի տրվել և ենթադրյալ իրավախախտման դեպքի կապակցությամբ չեն սկսվել հանցագործությունների ժամանակին բացահայտմանն ու հետագայում դրանց բացասական ազդեցության կանխարգելմանն ուղղված քրեադատավարական իրավահարաբերություններ, ավելին՝ վերջինս, շարունակելով իր հակաօրինական գործունեությունը, չարաշահել է իր պաշտոնեական դիրքը, մասնավորապես՝ 30.09.2018թ. ժամը 23:30-ի սահմաններում, իր աշխատասենյակում, նշված վիճաբանության և Մ.Զախախյանի կողմից Գ.Հարոյանի ծնողի հասցեին հայհոյանք հնչեցնելու մասին վերջինիս կողմից հեռախոսով եղբորը տեղեկացնելու վերաբերյալ Գ.Հարոյանի հետ պարզաբանումներ կատարելու ընթացքում, նախատել և զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ առանց իրեն՝ որպես վաշտի հրամանատարի, դեպքի մասին զեկուցելու ու եղբորը տեղեկացնելու՝ այդպիսով վաշտի «ներքին խոհանոցը դուրս հանելու» և իրեն անտեսելու պատճառով, ծնողին ուղղված սեռական բնույթի հայհոյանք է հնչեցրել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող Գ.Հարոյանի հասցեին՝ անպարկեշտ ձևով ստորացնելով նրա պատիվն ու արժանապատվությունը, ինչի արդյունքում անզգուշությամբ առաջացել են նյութական ծանր հետևանքներ՝ 01.10.2018թ. ժամը 10:50-ի սահմաններում, Գ.Հարոյանը, Լուկաշ Պետրոսյանի, ինչպես նաև Մկրտիչ Զախախյանի գործողությունների հետևանքով գտնվելով խիստ ընկճված վիճակում, վաշտի զինանոցում համածառայող, շարքային Գոռ Հովսեփի Ցոցիկյանին ամրակցված ԱԿ-74 տեսակի 1328223 համարի ինքնաձիգից մեկ կրակոց է արձակել իր կրծքավանդակի ձախակողմյան հատվածում և տեղափոխվել Մարտունու

զինհոսպիտալ, որտեղ նույն օրը՝ ժամը 15:05-ին, գրանցվել է նրա կենսաբանական մահը: (…)»[1]*:*

6.1. Մկրտիչ Երեմի Զախախլյանը ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով, 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«նա հանդիսանալով ԱՀ ՊԲ 36534 զորամասի 5-րդ գումարտակի 13-րդ վաշտի 3-րդ դասակի 2-րդ ջոկի հրամանատար, պարտադիր ժամկետային զինծառայող, կոչումով կրտսեր սերժանտ, նույն վաշտի 2-րդ դասակի 2-րդ ջոկի հրաձիգ, պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Գևորգ Սուրենի Հարոյանի նկատմամբ կոչման բերումով հանդիսանալով պետ, 2018 թվականի սեպտեմբերի 8-ին՝ մինչև ժամը 17:00-ն ընկած ժամանակահատվածը, խախտելով ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 158-րդ հոդվածների և կարգապահական կանոնագրքի 4-րդ հոդվածի պահանջները՝ կապված զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի կարգապահության հետ, ԱՀ ՊԲ 36534 զորամասի ծխարաններից մեկում վիճաբանել է իր նկատմամբ ստորադաս հանդիսացող, շարքային Գ.Հարոյանի հետ, որի ընթացքում այլ բռնություն է գործադրել նրա նկատմամբ՝ հարվածել է վերջինիս ճակատի միջնամասի վերին հատվածին՝ պատճառելով քերծվածքի տեսքով մարմնական վնասվածք:*

(…)

Բացի այդ, Մկրտիչ Զախախլյանը, հանդիսանալով ԱՀ ՊԲ 36534 զորամասի 5-րդ գումարտակի 13-րդ վաշտի 3-րդ դասակի 2-րդ ջոկի հրամանատար, պարտադիր ժամկետային զինծառայող, կոչումով կրտսեր սերժանտ, 2018 թվականի սեպտեմբերի 29-ին հանդիսացել է 5-րդ գումարտակի 13-րդ վաշտի պատասխանատու և նույն օրը՝ ժամը 12:30-ի սահմաններում, խախտելով ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 158-րդ հոդվածների և կարգապահական կանոնագրքի 4-րդ հոդվածի պահանջները՝ կապված զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության հետ, մահճակալին պառկելու համար, զորանոցի՝ 13-րդ վաշտի ննջասենյակում վիճաբանության մեջ է մտել կոչման բերումով իր նկատմամբ ստորադաս

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 12, թերթեր 121-123:

հանդիսացող, շարքային Գևորգ Սուրենի Հարոյանի հետ, ապա նաև՝ իրեն սպելու պատճառով, իր թվացյալ գերակայությունն ընդգծելու շարժառիթով, սեռական բնույթի հայհոյանք է հնչեցրել Գ.Հարոյանի մոր հասցեին և ծեծել նրան՝ ձեռքերով և ոտքերով բազմաթիվ անգամներ հարվածներ հասցրել Գ.Հարոյանի դեմքի և մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով աջից վերին կոպի շրջանում արյունազեղման և քթի ու ձախ արմնկահոդի շրջաններում քերծվածքների տեսքով մարմնական վնասվածքներ, ինչն անզգուշությամբ առաջացրել է այլ ծանր հետևանքներ՝ շարքային Գևորգ Հարոյանը, չդիմանալով կրտսեր սերժանտ Մկրտիչ Երեմի Չախախյանի կողմից իր նկատմամբ գործադրված բռնությունների և համածառայողների ներկայությամբ իր հասցեին հնչեցրած կոպիտ՝ ստորացուցիչ հայհոյանքին, Մ.Չախախյանի, ինչպես նաև ԱՀ ՊԲ 36534 զորամասի 5-րդ գումարտակի 13-րդ վաշտի հրամանատար, կապիտան Լուկաշ Պետրոսյանի գործողությունների հետևանքով գտնվելով խիստ ընկճված վիճակում, 2018 թվականի հոկտեմբերի 1-ին՝ ժամը 10:50-ի սահմաններում, 13-րդ վաշտի զինանոցում համածառայող, շարքային Գոռ Հովսեփի Ցոցիկյանին ամրակցված ԱԿ-74 տեսակի 1328223 համարի ինքնաձիգից մեկ կրակոց է արձակել իր կրծքավանդակի ձախակողմյան հատվածում և տեղափոխվել Մարտունու զինհոսպիտալ, որտեղ նույն օրը՝ ժամը 15:05-ին, գրանցվել է նրա կենսաբանական մահը (…)»[2]:

7. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննության առնելով մեղադրյալ Լուկաշ Պետրոսյանի պաշտպան Ա.Հայրապետյանի՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ միջնորդությունը, 2024 թվականի դեկտեմբերի 4-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն գործով վարույթի մասնավոր մասնակիցներից՝ մեղադրյալներ Լուկաշ Պետրոսյանը և Մկրտիչ Չախախյանը, վարույթին օժանդակող անձիք հանդիսացող Իշխան Մելքոնյանը, Էդմոն Ռամազյանը, Մանուկ Բաղալյանը, Արծրուն Մեսրոպյանը, Վալերի Միխիթարյանը, Յուրի Միրզոյանը, Վրեժ Բեգլարյանը, Դավիթ Բեգլարյանը, Յուրի Բեգլարյանը, Դավիթ Կարապետյանը և Դավիթ Սարգսյանը բնակվում են Դատարանի սպասարկման տարածքից դուրս՝ Երևան քաղաքում, ավելին՝ պաշտպաններ Աշոտ Ասրեսյանը և Արմեն*

---

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 12, թերթեր 154-155:

Հայրապետյանը ոչ միայն բնակվում, այլ նաև գործունեություն են իրականացնում Երևան քաղաքում:

Նման պայմաններում՝ ստացվում է, որ վարույթին օժանդակող անձանցից և վարույթի մասնավոր մասնակիցներից ընդհանուրը 27 անձանցից 15-ը բնակվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, ինչն էլ կազմում է մեծամասնություն, իսկ մեղադրյալներ Մկրտիչ Զահաքյանը և Լուկաշ Պետրոսյանը տվել են իրենց համաձայնությունը վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ:

Այսինքն՝ Դատարանն արձանագրում է, որ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու՝ Օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված անհրաժեշտ երկու պայմանները միաժամանակ առկա են:

Ամփոփելով վերոնշվածը՝ Դատարանը գտնում է, որ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը պետք է փոփոխել և վարույթն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան, ավելին՝ սույն դեպքում տարածքային ընդդատության փոփոխումը բխում է նաև արդարադատության արդյունավետության շահերից: (…)»[3]*:*

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 16-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն գործի փաստական հանգամանքները գնահատելով վերը շարադրված իրավական նորմերի համատեքստում՝ հարկ է արձանագրել, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փոխելով վարույթի տարածքային ընդդատությունը, առերևույթ չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Մասնավորապես, վարույթի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում հետևյալը.*

- Վկաներ Մանուկ Աշոտի Բաղալյանը և Յուրի Վեքսիլի Միրզոյանը Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից, թեև դիտարկվել են որպես Երևան քաղաքի բնակիչներ, սակայն այդ հանգամանքը հաստատող որևէ փաստական տվյալ գործի նյութերում առկա չէ (տե՛ս քրեական

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 13, թերթեր 146-151:

գործ, հատոր 5, գ.թ. 126, հատոր 2, գ.թ. 140, ինչպես նաև՝ մեղադրական եզրակացությանը կից դատակոչի ենթակա անձանց ցուցակ): Այս կապակցությամբ Դատարանը հարկ է համարում նշել, որ մեղադրական եզրակացությանը կից դատակոչի ենթակա անձանց ցուցակում ոչ տպագիր (տե՛ս մեղադրական եզրակացությանը կից դատակոչի ենթակա անձանց ցուցակ) կատարված գրառումները, չեն կարող բավարար համարվել՝ արձանագրելու, որ նշված անձինք բնակվում են Երևան քաղաքում:

- Դավիթ Մնացականի Կարապետյանը Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից, թեև դիտարկվել է որպես Երևան քաղաքի բնակիչ, սակայն այդ հանգամանքը հաստատող որևէ օբյեկտիվ փաստական տվյալ գործի նյութերում առկա չէ: Այս կապակցությամբ Դատարանը հարկ է համարում նշել, որ նախնական դատալսումների փուլում, դատարան դեռևս չհրավիրված անձի կողմից, խնդրո առարկա որոշման կայացման օրը, գրավոր (դատական նիստին Դավիթ Կարապետյանի մասնակցության վերաբերյալ տվյալ առկա չէ), իր բնակության վայրի վերաբերյալ տրամադրված տեղեկությունը՝ առանց այդ հանգամանքը հիմնավորող որևէ փաստաթղթի՝ չի կարող բավարար համարվել՝ արձանագրելու, որ նշված անձը բնակվում է Երևան քաղաքում:

- Մեղադրյալներ Մկրտիչ Երեմի Չախախյանը և Լուկաշ Սամվելի Պետրոսյանը, ովքեր Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դիտարկվել են որպես Երևան քաղաքի բնակիչներ, բնակվում են համապատասխանաբար՝ Արմավիրի մարզի, Արմավիր քաղաքի, 45-րդ փողոցի, 58-րդ տանը, և Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի, Մուշ թաղամասի, 10/2 շենքի 17-րդ բնակարանում (տե՛ս մեղադրական եզրակացությանը կից դատակոչի ենթակա անձանց ցուցակ, գործի քննության ընթացքում մեղադրյալներին ուղարկված դատական ծանուցագրեր): Ընդ որում՝ Լուկաշ Սամվելի Պետրոսյանը հանդիսանում է զինծառայող և ըստ գործի նյութերի՝ ծառայում է Լոռու մարզում: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ բնակության վայրի վերաբերյալ խնդրո առարկա որոշման կայացման օրը մեղադրյալների տրամադրած տեղեկությունը՝ առանց այդ հանգամանքը հիմնավորող որևէ փաստաթղթի՝ չի կարող բավարար համարվել՝ արձանագրելու, որ նշված անձիք բնակվում են Երևան քաղաքում: Ընդ որում՝

Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ մեղադրյալ Լուկաշ Պետրոսյանը՝ Երևան քաղաքում իր բնակության վայրի վերաբերյալ տեղեկություն կարողացել է տրամադրել միայն այն բանից հետո, երբ դատական նիստն ընդմիջվել է այդ հանգամանքը ճշտելու համար (տե՛ս 2024 թվականի դեկտեմբերի 4-ի դատական նիստի արձանագրության ձայնային կրիչը): Ավելին, թեև Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, այդ թվում նաև այն հանգամանքի հաշվառմամբ, որ մեղադրյալներ Մկրտիչ Չախախյանը և Լուկաշ Պետրոսյանը բնակվում են Երևան քաղաքում՝ որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0138/01/21 քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու մասին, այնուհանդերձ՝ այդ որոշման օրինակները մեղադրյալներին ուղարկվել է՝ Արմավիրի մարզի, Արմավիր քաղաքի, 45-րդ փողոցի, 58-րդ տուն և Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի, Մուշ թաղամասի, 10/2 շենքի 17-րդ բնակարան հասցեներով:

- Վկաներ Վրեժ Զավենի Բեգլարյանի, Դավիթ Վրեժի Բեգլարյանի, Յուրի Վրեժի Բեգլարյանի Երևան քաղաքում բնակվելու վերաբերյալ որևէ փաստական տվյալ գործի նյութերում առկա չէ (տե՛ս մեղադրական եզրակացությանը կից դատակոչի ենթակա անձանց ցուցակ): Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ենթադրաբար Mulberry համակարգի միջոցով արտահանված տվյալները՝ նշված անձանց Երևան քաղաքում հաշվառված լինելու վերաբերյալ, չեն կարող բավարար համարվել՝ արձանագրելու, որ նշված անձիք բնակվում են Երևան քաղաքում:

Վերոգրյալի հետ մեկտեղ՝ Դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է անձի՝ դատական շրջապտույտի մեջ հայտնվելու վտանգ հաշվի առնելով ինչպես թիվ ՍԴ3/0138/01/21 քրեական գործը Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկված լինելու ժամանակագրությունը, այնպես էլ սույն քրեական գործով մեկ անգամ արդեն իսկ ընդդատության հարցի հետ կապված վեճի բարձրացումը: Ընդ որում՝ Դատարանի գնահատմամբ անձանց հաշվառման հասցեի վերաբերյալ ենթադրաբար Mulberry համակարգի միջոցով արտահանված, ինչպես նաև առանց որևէ փաստաթղթավորված հիմնավորման՝ բանավոր տեղեկությունների հիման վրա՝ վարույթի տարածքային ընդդատության փոփոխումը կարող է հանգեցնել նշված հարցում սուբյեկտիվ հայեցողության և, որպես արդյունք, դատական անվերջ շրջապտույտի, ինչն անթույլատրելի է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը եզրահանգում է, որ չի հաստատվում վարույթի 27 մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության՝ Երևան քաղաքի դատական տարածքում բնակվելու հանգամանքը, այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքն առերևույթ բացակայում է, ուստի անհրաժեշտ է թիվ ՍԴ3/0138/01/21 վարույթն ուղարկել Վճռաբեկ դատարանի քրեական պալատ՝ վարույթի տարածքային ընդդատության հարցի որոշման համար: (...)»[4]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ3/0138/01/21 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի*

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 13, թերթեր 162-166:

նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

12. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[7]:

13. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը»*:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

14.1. Անհրաժեշտ է ընդգծել, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է **գործադրվել բացառիկ դեպքերում**, երբ **բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի** ընդդատությունը փոխելու օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Հետևաբար, նշված նորմը մեկնաբանելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- մեղադրյալներ Լ.Պետրոսյանը և Մ.Զախախյանը իրենց համաձայնությունն են հայտնել, որպեսզի քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխվի[8]:

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը՝ քսանյոթ անձանցից տասնհինգը, բնակվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, ինչպես նաև այն, որ մեղադրյալներն իրենց համաձայնությունն են հայտնել վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին[9]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն իր անհամաձայնությունն է հայտնել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմանը՝ արձանագրելով, որ քրեական վարույթի նյութերում առկա չեն բավարար փաստական տվյալներ առ այն, որ վկաներ Մ.Բաղալյանը, Յ.Միրզոյանը, Դ.Կարապետյանը, Վ.Բեգլարյանը, Դ.Բեգլարյանը,

---

[8] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 19, դատական նիստի արձանագրություն, թերթ 145:
[9] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Յ.Բեգլարյանը, ինչպես նաև մեղադրյալներ Մ.Զախախլյանը և Լ.Պետրոսյանը բնակվում են Երևան քաղաքում[10]:

16. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելիս, չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Մասնավորապես, սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ վարույթին ներգրավված են թվով քսանվեց մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնցից միայն տասներկուսն են բնակվում Երևան քաղաքում: Ինչ վերաբերում է վկաներ Մ.Բադալյանի և Յ.Միրզոյանի՝ Երևան քաղաքում բնակվելու մասին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատողություններին, ապա հարկ է արձանագրել, որ սույն վարույթում առկա չեն բավարար և համոզիչ փաստական տվյալներ նշվածը հաստատված համարելու համար: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը ընդունելի է համարում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի այն դատողությունը, որ մեղադրական եզրակացությանը կից դատակոչի ենթակա անձանց ցուցակում ձեռագիր կատարված գրառումները չեն կարող հիմք հանդիսանալ հաստատապես արձանագրելու, որ վկաներից երկուսը բնակվում են Երևան քաղաքում:

Հետևաբար, չի հաստատվում, որ սույն վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝

[10] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքը բացակայում է:

17. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ3/0138/01/21 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր չէ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը հարկ է համարում ընդգծել, որ սույն գործով առերևույթ առկա է դատական շրջապտույտի, գործի ողջամիտ ժամկետում քննության և դրանից ածանցվող այլ իրավունքների խախտման վտանգ, հաշվի առնելով, որ սույն քրեական գործը **2021 թվականի դեկտեմբերից** գտնվում է դատարանների վարույթում, այդ ընթացքում երկու անգամ ուղարկվել է ըստ առարկայական ընդդատության և մեկ անգամ ընդդատության հարցի հետ կապված վեճ է լուծվել, սակայն **մինչ օրս գործի քննությունը գտնվում է նախնական դատալսումների փուլում**:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ՍԴ3/0138/01/21 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ